**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք, ՀՀ,
Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4 փ., 4 շ., Հեռ. (094) 248414 ,
geghadir.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 85
*14 դեկտեմբեր 2015թ.*

Հարգելի պարոն Գուլոյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն, Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 10-ի հերթական նիստի որոշումները:

Առդիր 10 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրդյան*

*Հեռ 096161060*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2015թվականի N 28-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 10-ի հերթական նիստի օրակարգը

1.Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի տարածքում 2016թ. տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին
2.Գեղադիր համայնքի ղեկավարի 2016թվականի վարձատրության չափը սահմանելու մասին
3.Կոտայքի մարզի Գեղադիր գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը նպաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4.Կոտայքի մարզի Գեղադիր համայնքի ավագանու 2016թվականի ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԲԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015թվականի N 29-Ն

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016Թ.ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ,8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ հոդվածների դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել 2016թվականի համար Կոտայքի մարզի Գեղադիր գյուղական համայնքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 10-ի
թիվ 29-Ն որոշման

# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Տուրքերի տեսակները | Օրենքով սահմանված դրույքաչափերը /հազար դրամ/ | Ավագանու սահմանած դրույքաչափերը/հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ | | |
| | հիմնական օբյեկտների համար՝ | | |
| | 1)մինչև 300քմ. Ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական(ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 0-15 .0 | 15 .0 |
| | 2)սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| | ա.201-ից մինչև 500քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-30. 0 | 30. 0 |
| | բ. 501-ից մինչև1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-50. 0 | 50. 0 |
| | գ. 1001-ից ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մինչև 3000 | 0-50.0 | 50 .0 |
| | դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-100 .0 | 100 .0 |
| | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | | |
| | 3)մինչև 20քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-3 .0 | 3 .0 |
| | 4) 20քմ.և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-5 .0 | 5. 0 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների/այդ թվում ոչ հիմնական/ վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| | 1 )չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն | 3. 0 | 3 .0 |
| | 2) բացի օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմեր՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով | | |
| | 3)Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր | | |

| | | | |
|---|---|---|---|
| | շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլվության համար | 5. 0 | 5. 0 |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| | 1)Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 0-17.5 | 2. 0 |
| | 2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 1. 5 – 17. 5 | 2 .0 |
| 5. | Համայնքի տարածքում՝ | | |
| | 1)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար, 1քմ .-ի համար | 0-350 | 350 |
| | 2)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության ընթացիկ տարվա համար | 150. 0- 200 .0 | 150.0 |
| | 3)Խանութներում,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 30. 0-60.0 | 30.0 |
| | 4)Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել.<br>ա.Հիմնական շինությունների ներսում, հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում<br>բ.Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման իրացման դեպքում | <br><br><br>1. 0-6.0<br><br>0-1 .0 | <br><br><br>4 .0<br><br>1 .0 |
| 6, | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար | 50.0 | 50.0 |
| 7. | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները), խաղատները՝ ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | | |
| | 1)առևտրի օբյեկտների համար | 25 .0-50.0 | 25 .0 |
| | 2)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 500.0-1000.0 | 500.0 |
| | 3)բաղնիքների (սաունաների) համար | 200.0-500.0 | 200.0 |
| | 4)խաղատների կազմակերպման համար | 500.0-1000.0 | 500.0 |
| | 5)շահումով խաղերի կազմակերպման համար | 250.0-500.0 | 250.0 |
| | 6)վիճակախաղերի կազմակերպման համար | 100.0-150.0 | 100.0 |
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար՝ | | |
| | 1)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1.0-2000 | 1.5 |
| | 2)թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2.5-3.5 | 2.5 |
| | 3)այլ արտաքին գովազդի համար՝ | 0.5-1.5 | 1.0 |
| | 4)Դատարկ գովազդային վահանակների համար՝ | 0.7 | 0.7 |
| 9. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝<br>Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 0-10.0<br><br><br>50.0-100.0 | 0.0<br><br><br>50.0 |
| 10. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 0-10.0 | 10 .0 |
| 11. | Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) | 0-500.0 | 150.0 |

| | | | |
|---|---|---|---|
| | ծիսակատարման ծառայություններ իրականացնելու և(կամ)մատուցելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է | | |
| 12. | Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ | | |
| | 1)3հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 2 500.0 |
| | 2) 5հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 5 000.0 |
| | 3) 7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար | | 7 000.0 |
| | 4) 10հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար | | 10 000.0 |
| | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ | | |
| | 1)Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար,տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 5.0 |
| | 2)Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 5 .0 |
| | 3)Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | | 5.0 |
| | 4)Համայնքի տարածքում նոր առաջացող գույքին հասցե տրամադրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 5 .0 |
| | 5) Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝ | | |
| | ա.կենցաղային աղբի համար՝ըստ հաշվառված անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ամսեկան | | 0.010 |
| | բ.Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի համար՝ ամսեկան | | 200դ. |
| | 6) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական վճարի դրույքաչափը սահմանել | | 10.0 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2015թվականի N 30-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է.

1.Գեղադիր համայնքի ղեկավարի 2016թվականի ամսական վարձատրության չափը սահմանել 260000/երկու հարյուր վաթսուն հազար/դրամ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016թվականի հունվարի 1-ից:
3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 4-ի«Գեղադիր համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին»N40-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015թվականի N 31-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝համայնքի ավագանին որոշում է՝

1.2016թվականի համար հաստատել Կոտայքի մարզի Գեղադիր գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:
3.Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 22-ի<<Կոտայքի մարզի Գեղադիր գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը.հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>N42-Ա որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Գեղադիր համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 10-ի N31-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ
# ԳԵՂԱԴԻՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016Թ.

Աշխատակիցների թվաքանակը՝ 7

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելում | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Գյուղապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 260000 | | | 260000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | - | 1 | 180000 | | | 180000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 165000 | | 16500 | 181500 |
| 5 | | Առաջատար մասնագետ | Համայնքային ծառայության | 3.1-1 | 1 | 160000 | | 16000 | 176000 |
| 6 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3.2-1 | 1 | 100000 | | 10000 | 110000 |
| 7 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72800 | | | 72800 |
| | | Պահակ | Տեխնիկական սպասարկման | - | 1 | 72800 | | | 72800 |
| | Ընդամենը | | | | 7 | 1010600 | | 42500 | 1053100 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015թվականի N 32-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ 2-րդ մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գեղադիր համայնքի ավագանու 2016թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2.Անհրաժեշտության դեպքում անցկացնել արտահերթ նիստեր:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՀԱՐՈՆ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄԿՐՏՉՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հաստատված
Գեղադիր համայնքի ավագանու 2015թ
դեկտեմբերի 10-ի N45Չ-Ա որոշման

# Գեղադիր համայնք ի2016թ. ավագանու նիստերի ժամանակացույց

| Ամիսը | Համայնքի ավագանու նիստի օրը | Համայնքի ավագանու նիստի օրակարգային հարցեր | |
|---|---|---|---|
| Հունվար | 13-ին | Համայնքի բյուջեի 4-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| | | Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին | |
| փետրվար | 24-ին | Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվություն | |
| Ապրիլ | 11-ին | Համայնքի բյուջեի 1-ին եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Հունիս | 10-ին | Համաձայնությո՞ւն հողային հաշվեկշռին | |
| Հուլիս | 12-ին | Բյուջեի 2-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| սեպտեմբեր | 12-ին | Համայնքի քառամյա զարգացման ծրագրի շրջանակներում համայնքի տարածական զարգացման ուղղությամբ օրենքով վերապահված լիզորությունների իրականացման մասին | |
| Հոկտեմբեր | 14-ին | Համայնքի բյուջեի 3-րդ եռ. կատարման ընթացքի մասին հաղորդում | |
| Դեկտեմբեր | 16—ին | Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին | |
| | | Համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին | |
| | | Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին | |
| | | Հաջորդ տարվա բյուջեի հաստատում | |
| | | Համայնքի համայնքի 2016թ. ավագանու նիստերի ժամանակացույցը հաստատելու մասին | |

Աշխատակազմի քարտուղար Թ.Մուդոյան